

428

82-3
7-48

Platch
1885

2011

2003

82-3

7-48

uy

Դ Ի Կ Կ Ե Ն Ս

ԱՐԲԵՑՈՂԻ ՄԱՀԸ

1001
633
P

FOR LIBRARY USE ONLY

Թարգմանություն

ՅՈՎՀ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ



ԹԻՖԼԻՍ

Տպարան Մ. Ռոտինեանց, Գորով. Պրոս. սեպհ. տուն,
1885

Доз. ценз. 25 го октября 1885 года тифлисъ.

ԱՐԲԵՅՈՂԻ ՄԱՀԸ

Մենք համարձակ կարող ենք ասել, որ մեծամեծ քաղաքների բազմամարդ փողոցներով անցուղարձ անող մարդկանց մէջ հազիւ թէ գտնվի մէկը, որը այդ բազմաթիւ մարդկանցից, որոնք ծանօթ էին իրան օրէմքով՝ չը մտաբեր էր զգվելի թշուառ կերպարանքով որ և է մարդու պատկեր, որին նա առաջ ճանաչում էր բոլորովին ուրիշ դրութեան, ուրիշ վիճակի մէջ և տեսել էր, թէ ինչպէս նա հետզհետէ, համարեա աննկատելի կերպով՝ շարունակ դէպի ցած, անկումն էր գլորվում, մինչև որ, վերջապէս, նրա կատարելապէս այլայլուած և արբեցութիւնից թորշմուած դէմքը չը զարթեցներ նրանում կարեկցութեան և զգուանքի զգացմունք իւրաքանչիւր անգամ նրան հանդիպելիս: Ով շատ է շքեւ մարդկանց մէջ իւր կոչման և կամ ընտրած պարապմունքի պատճառով, և շարունակ գործ, յարբերութիւն է ունեցել բազմազան մարդկանց հետ, նա չի դժուարանայ մտաբերել այն ժամանակը, երբ՝ այժմ իրեն մտով սողացող կեղտոտ ցնցոտիների մէջ կոլոլուած թշուառականը — քաղցածութեան և վշտի այս մարմնացած պատկերը — եղել է պատուաւոր վաճառական:

գրագիր կամ լաւ պաշտօնի և բաւական միջոցների տէր մի աստիճանաւոր: Եւ կամ մեր ընթերցողներէց ամենմէկը միթէ չէ յիշու՞մ իրեն առաջուայ ծանօթների շրջանից որ և է թշուառացած, ընկած մարդու, որ այժմ չարչարվում, տանջվում է քարահատակի վրայ քաղցածութեան ճանկերում. մի մարդու, որից ամենքը սառնութեամբ դարձնում են երեսները և որը, Աստուած գիտէ, թէ ինչպէս աշխատում է ազատվել սովամահ լինելուց... Աւաղ, այս օրինակ դէպքերը այնքան շուտ-շուտ են կրկնվում, որ չեն կարող չը պատահել ամենմէկիս դիտողութեանը, և մեծմասամբ այսօրինակ դէպքերի արմատը, պատճառը նոյնն է — արբեցողութիւնը. այս կատաղի մոլութիւնը, այս սարսափելի հրապուրանքը, որը թէ և կամաց կամաց, բայց և այնպէս հաստատ տանում է դէպի թոյնը, որը խլացնում, խեղտում է բոլոր միւս մտքերն ու խորհուրդները մինչև այն աստիճան, որ մոլութեան այս դժբաղտ զոհը, մոռանում և կործանում է կնոջը, զաւակներին, բարեկամներին, պատիւը, բարի անունը և ամբողջ կենսական բաղտաւորութիւնը և անդիմադրելի արագութեամբ խայտառակութեան և մահուան զոհ է դառնում:

Այս դժբաղտներից ոմանքը դէպի իրենց խայտառակող այս ախտը հասցնում են ձախորդութիւնը և կարիքը: Նրանց յոյսերի և կենսական հաշիւների ոչնչանալը, սիրելի անձնաւորութեանց մահը, վիշտը, որը կրճում է սիրտը, բայց չէ խորտակում նրան վերջնականապէս, այլ զըկելով հաստատակամութիւնից և թուլացնելով յիմարացնում է նրանց, և այնուհետև նրանք ներկայացնում են խելագարների սարսափելի պատկերը, որոնք կամաց կամաց մեռնում են իրենց սեպ-

հական ձեռքերով: Սակայն նրանց մեծամասնութիւնը գիտակցաբար և աչքերը բաց են գլորվում անդունդը, որտեղից, շատ քիչ բացառութեամբ, ոչ ոք չէ դուրս գալիս, այլ, ընդհակառակը, շարունակ աւելի խորը և աւելի անյոյս ընկղմվում են նրա անյատակ անդունդը:

Այսպիսի մի թշուառ մարդ կանգնած էր իրեն մեռնող կնոջ մահճի մօտ, այն ինչ նրանց երեխաները ծունկ չոքած խմբվել էին շուրջը և հանդարտ հեկեկանքներով ընդհատում էին իրենց անմեղ աղօթքները դէպի Ամենակարողը: Սենեակը շատ աղքատ էր կահաւորած, և բաւական էր մի հայեացք ձգել գունաթափ դէմքի վրայ, որի կենսական օյժերը յայտնի կերպով հանգչում էին, հասկանալու համար, որ վիշտը, կարիքը, տանջող հոգսերը կերել, հալ ու մաշ էին արել նրա սիրտը երկար տարիների ընթացքում: Պառաւը, արտասուքի հեղեղներ թափելով, պահպանում էր ձեռքերով իւր մեռնող աղջկայ գլուխը: Բայց դէպի պառաւը չէին դարձրած տառապնալի գունաթափ դէմքը և ոչ իւր ստոր և դողդոջիւն մատները նրա ձեռքըն էին սեղմում, — այլ իւր ամուսնուն. նրա վրայ էր յառած նրա մարող հայեացքը և նա էր դողում այս հայեացքի ներքոյ: Նրա հագուստը ցնցոտիներ էին և կեղտոտ, դէմքը վառվում էր, աչքերը արիւնով էին լցուած և ուռած: Նրան մերձ իմահ հիւանդ կնոջ մահճի մօտ կանչեցին մի խայտառակ զինարբեցութիւնից:

Մահճակալի առաջ դրած թղթէ լուսամբովով լապտերը աղօտ լոյս էր տարածում շրջապատող դէմքերի վրայ և սենեակի մնացած մասը թողնում էր թանձր մռայլ ստուերի մէջ: Տան պատերից դուրս տիրում էր գիշերային լուսութիւն, իսկ սենեակում մահուան խա-

ղաղութիւն: Բուխարի վերևը կախ էր արած ժամացոյցը, որի քանդաղ չկէր ոչնէս էր միայն, որ ընդհատուած էր խորին լուութիւնը, բայց նա հանդիսաբար հնչում էր բոլոր շրջապատողների ականջներում, որովհետև նրանք լաւ գիտէին, որ դեռ չը լրացած այս տաժանելի ժամը, նա կը զարկէ հողիների աշխարհը փոխադրվողի վերջին բուսէն:

Սարսափելի է, երբ մարդ սպասում է մահուան մօտենալուն, մանաւանդ երբ գիտես, որ բոլոր յոյսերը կորան, առողջանալ անհնարին է, և միւսնոյն ժամանակ նստիր և համբարիր ժամերը, մանաւանդ երկար, խուլ և տխուր գիշերները, և այս նրանք միայն կը հասկանան, որոնք նստել են հիւանդի մահճի մօտ: Արիւնը սառչում է երակներիդ մէջ, երբ ստիպուած ես լսել քո առաջը անդգայ և անօգնական պառկած տառապելի բերանից նրա սրտի սրբազան գաղտնիքները, այն գաղտնիքները, որ երկար տարիների ընթացքում պահուած էին նրա սրտի ամենածածուկ խորշերում, և մտածել թէ որքան անօգուտ են անցնում ամբողջ կեանքի ընթացքում պահած լուութիւնն ու համբերութիւնը, երբ ջերմն ու բորբոքուած երեւակայութիւնը պատուում են, վերջապէս, նրա դիմակը: Զառանցանքների մէջ մեռնող մարդիկ երբեմն զարմանալի ճառեր են ասում, — նրանք խոստովանում են այնպիսի անսպասելի և սարսափելի սխալներ ու յանցանքներ, որ նրա գլխավերև նստողները լսելով այդ՝ սարսափահար եղած կը փախչէին, որպէս զէ իրենց տեսած ու լսածներից խելքները չը կորցնէին... Բայց որքան այսպիսի թշուառականներ մեռել են մենմենակ՝ խոստովանելով մահուան կռուի ժամանակ այնպիսի գործքեր, որոնց միմիայն անունները լսելով՝ կը

փախչէին ամենամաներկիւղներն անդամ:

Սակայն այսպիսի խոստովանութիւններ չէին լսվում մահճից, որը շրջապատել էին ծուռնի չորած մանուկները: Նրանց խեղտուած լաց ու կոծը և հեկեկանքները միայն խանդարում էին սենեակի տխուր լուութիւնը: Մեռնողը բերանը մնջուել էր, և երբ նրա ձեռքը ընկաւ վերմակի վրայ, և նա իւր հայեացքը երեխաներից դարձրեց ամուսնուն՝ ի դուր աշխատեց խօսել և ընկաւ բարձի վրայ. այդ միջոցին այնպիսի խաղաղութիւն և լուութիւն տիրապետեց, կարծես, հիւանդը քնեց: Երեխայքը թափվեցան նրա վրայ և կանչում էին առաջ անունը տալով կամաց, յետոյ բարձր և, վերջապէս, դռնը յուսահատութեան գոռուն գոչելով, բայց պատասխան չը կար: Ականջ դրին շնչառութեանը, բայց նա մեռած էր, — սրտին, և սիրտը այլ ևս չէր բարախում: Այս սիրտը փշրուած էր — և ջրատարը վախճանվեց:

Ամուսինը ընկաւ մահճակալի մօտի աթոռի վրայ և բռնեց ձեռքերով իւր բորբոքուած ճակատը: Նա կարգով նայում էր իւրաքանչիւր երեխայի վրայ, բայց երբ նրա հայեացքը հանդիպեց մանկան արտասուած աչքերին՝ նա ամբողջ մարմնով ցնցվեց այս հայեացքի ներքոյ: Նրան ոչ ոք մի միսիթարական խօսք չասաց, ոչ ոք նրա վրայ մի քաղցր հայեացք չը ձգեց: Ամենքը ահ ու դողով հեռացան նրանից, և երբ, վերջապէս, նա դուրս սեղաւ սենեակից, ոչ ոք չը հետեց այրիացածին՝ միսիթարելու նրա դռը վիճակը:

Կար ժամանակ երբ բազմաթիւ բարեկամներ կը շտապէին նրա մօտ մասնակից լինելու նրա ցաւերին և կը յայտնէին նրան իրենց անկեղծ կարեկցութիւնները:

Ի՞նչ եղան այժմ նրանք: Միմեանց ետևից նրանից հեռացան աղգականները) բտրեկամները, մինչև անգամ հասարակ ծանօթները և այլևս նայել անգամ չէին կամենում արբեցողի վրայ: Միմիայն կինը մնաց նրան անփոփոխ անձնատուր և հաւատարիմ թէ լաւ և վատ օրերում, թէ կարիք և հիւանդ ժամանակ, և այս բոլորի փոխարէն նա ի՞նչ հատուցեց նրան:— Այս տկճորը օղետնից տուն սեցաւ, որ տեսնէ թէ ինչպէս է նա մեռնում:

Նա դուրս պոճաւ տանից և արագ արագ վազում էր փողոցներով: Խղճի խայթը, երկիւղը, ամօթը, — այս բոլորը միանգամից թափվեցան նրա գիտակցութեան մէջ: Վիտով չափ հարբած, շշմուած իսկայն տեսած սիրտ ու թոք պատառող տեսարանից, նա նորից վերադարձաւ օղետուն, որտեղից միքիչ առաջ դուրս էր եկել: Բաժակը բաժակի ետևից դատարկվում էր: Արիւնը եփ էր գալիս նրա երակների մէջ և գլուխը պտոյտ էր գալիս: Մե՛ռաւ... Մենք ամենքս պէտք է մեռնենք, ի՞նչու համար և նա չը պէտք է մեռնի: Վինը նրա համար շատ լաւ էր, կնոջ աղգականները յաճախ ասում էին նրան այդ: Ե՛՛հ, գլուխը իրանց քարը: Մի՞թէ հէնց իրենք չը ձգեցին նրան երեսի վրայ մենմենակ, որ քաշտայ իւր սև օրը, ինչպէս որ գիտէ: Դէ՛ լաւ, ի՞նչ աննք. նա մեռաւ և կարելի է բախտաւոր է: Մի բաժակ էլ, մէկէլ լարո՛ւ: Ուր-ր՛ա: Գինին մարդուս կեանքը զուարճացնում է, ի՞նչու և գինին չը զուարճանայ կեանքով...

Իսկ ժամանակը անցնում էր. նրա որդիքը մեծացել էին, այլևս երեխաներ չէին: Հայրը մնաց նոյն անուղղի, գինեմոլ արբեցողը, բայց աւելի թշուառ,

զջտուած ու վչացած: Նրա որդիքը, որոնք թափառում էին փողոցներում, արդէն վաղուց հեռացել էին նրանից, միմիայն աղջկն էր մնացել նրա մօտ, որը դիւշեր ու ցերեկ աշխատում էր և որից հայրը միշտ կարողանում էր աղաչանքով կամ թակելով մի բան պոկել խմելու համար: Այսպէս նա շարունակում էր ապրել, ինչպէս առաջ, և այսպիսի կեանքը նրա համար արդարև զուարճալի էր:

Մի անգամ երեկոյեան տասը ժամին, ոչ ուշ, երբ աղջկը վաղուց հիւանդ պառկած էր և, հեռաբար, տրաքվելու համար համարեա թէ ոչինչ չը կար՝ նա տուն էր վերադառնում և ճանապարհին մտածում էր. եթէ որ աղջկը կարող է դեռ փող աշխատել, այն ժամանակ նրան հարկաւոր է դիմել ծխական բժշկին կամ, վերջապէս, հարցնել գոնէ նրանից, արդե՞օք աղջկայ համար հարկաւոր չէ որ և է բան, որի վրայ նա մինչև այսօր ոչինչ ուշադրութիւն չէ դարձրել: Դեկտեմբերի անձրևային և քամի դիշերներից մէկն էր: Նա մի անցորդից ողորմութիւն խնդրեց մի ոչինչ բան, նրանով հաց գնեց, այն պատճառով միայն, որ իրեն համար շահ էր, որ, որքան հնարաւոր է, պահպանել աղջկայ կեանքը. և յամառութեամբ տուն էր շտապում, որքան այդ կարելի էր այն անձրևին և քամուն:

Լօնդօնի Ֆլիտ-Ստրիտ և Տեմզա գետի ափերի արանքում շինուած են բազմաթիւ մռայլ տնակներ կամ մեծ գաւիթներ. այս գաւիթներից դէպի մէկը ուղղեց նա իւր քայլերը: Այս տեղի ցեխը և տների անշուք տեսքը աներևակայելի էին. սրա վերապներից լսվում էին միմեանց հայհոյների կամ հարբած բնակիչների աղմուկների ձայները:

Քամին կամ տեղական մուժը գիշեր սիրողներից մէկը հանգրեց ամբողջ փողոցում գտնուած միակ լապտերը. այնուհետև տեղ-տեղ, լուսամուտների առաջևը միայն լուսաւորվում էր) — այն միքանի բախտաւորների սեփականներում աղօտ լոյսով վառվող մոմերի լոյսով, որոնք կարող էին թոյլ տալ իրենց այդ շռայլութիւնը. քամին սուլում էր կիսաւեր տների մէջ. դռների լուսամուտների փեղկերը ճռնչում էին նիզերի վրայ, ապակիները դողում էին շրջանալիներում և, կարծես, ամբողջ թաղը պատրաստ էր կործանվելու:

Նա մթութեան մէջ առաջ էր գնում, երբեմն դիպչելով ջրի խողովակին, և վերջապէս, մօտեցաւ վերջին տանը: Դուռը, կամ աւելի ճիշտ, նրա մնացորդը, բազմաթիւ կենողների յարմարութեան պատճառով կրնկի վրայ բաց էր. նա խարխուլ, ոլորուն սանդուղով բարձրանում էր վերին յարկը:

Նա իւր սենեակի դռներից միքանի քայլ միայն հեռու էր գտնվում վերջապէս, որ յանկարծ դուռը բացվեցաւ և այն տեղից վզդովուած դուրս նայեց աղջիկը խղճուկ, մաշուած երեսով, ձեռքով պահպանելով քամուց հայվող մոմը:

— Այս դ՞ուր ես, հայրիկ, հարցրեց աղջիկը:

— Էլ ո՞վ պէտք է լինի, կոպտութեամբ խօսքը կտրեց հայրը: — Ի՞նչու համար ես դողում...: Այսօր ես ստիպուած էի շատ քիչ խմել, քանի որ գինին առանց փողի, իսկ փողը առանց բանելու չես ստանայ: Այս մարդը ի՞նչ է շինում քեզ մօտ. այ՛, դու անզգամ:

— Հայր, ես հիւանդ եմ, սաստիկ հիւանդ եմ, պատասխանեց աղջիկը, արտասովելով:

— Հըմ... մունչեց հայրը այն մարդու հանգով որը հարկադրուած է ընդունել կատարուած անախորժեղելութիւնը, որից նա ուրախութեամբ կը դարձնէր երեսը, եթէ կարողանար:

— Դու պէտք է անպատճառ առողջանաս, որովհետև մեզ փող է հարկաւոր: Գնա՛ ծխական բժշկի մօտ, որ նա քեզ մի որ և է դեղ տայ: Դրանք այդ անարգները, դրա համար ուձիկ են ստանում: Ել ի՞նչ ես դռների մէջ կանգնել... Դէ՛նը կորի, և թո՛ղ որ անցնեմ:

— Հայր, շէջաց աղջիկը, իւր ետևից դուռը ծածկելով, և նրա առաջը կտրելով, — Վի՛հէլմը դարձեալ եկաւ:

— Ո՞վ, յետ յետ գնալով, հարցրեց հայրը:

— Ստու... Վի՛հէլմը, եղբայր Վի՛հէլմը, բացատրեց աղջիկը:

— Նա ի՞նչ է ուզում, ասաց հայրը, աշխատելով իրան զսպել. փող, ու՞տել, խմե՞լ... Եթէ դրա համար է եկել շատ է սխալվել: Դէս սուր մոմը... Մոմը, քեզ ասում եմ, յի՛մար... Ես նրան ձեռք չեմ տայ:

Նա աղջկայ ձեռքից մոմը խլեց և մտաւ սենեակը:

Կոտորուած աթուռի վրայ, գլուխը ձեռքերին նեցուկ տուած և աչքերը կրակին յառած՝ նստած էր աղքատիկ հագնուած, մօտ քսան երկու տարեկան մի երիտասարդ: Նա վեր թռաւ տեղից, տեսնելով ներս մտնող հօրը:

— Դուռը, կոխալիր դուռը, Մարիամ, շտապով ասաց երիտասարդը: — Դու ինձ վրայ այնպէս ես նայում, հայր, կարծես թէ առաջին անգամ ես տեսնում: Ասենք թէ, շատ ժամանակ է անցել ինչ որ դու ինձ

արտաքսեցիր տանից) և հեշտութեամբ կարող էիր մոռանալ:

— Բայց այժմ դու ի՞նչ ես ուզում, հարցրեց հայրը, նստելով նրա դիմացը: Գու ի՞նչ ես կորցրել այս տեղ և ի՞նչ ես որսնում:

— Օթեան, պաասախանեց որդին. — ես նեղ տեղներմ և այս էլ բաւական է: Եթէ ինձ բռնեն՝ կը կախեն, այս հաստատ բան է: Եւ ինձ անպատճառ կը բռնեն, եթէ ես այս տեղ չը թաքնվեմ: այս էլ հաստատ է:

— Դրանով դու ուզում ես ասել որ դու գողութիւն կամ սպանութիւն ե՞ս գործել այդպէս չէ, հարցրեց հայրը:

— Հէնց այդպէս, կամ մի՞թէ այդ քեզ զարմացնում է, հայր:

Նա շեշտակի նայում էր հօր երեսին, բայց վերջինս խոյս տվեց այս հայեացքից և նայում էր յատակի վրայ:

— Ո՞րտեղ են եղբայրներդ, հարցրեց նա երկար լռութիւնից յետոյ:

— Այն տեղ, որտեղից նրանք քեզ երբէք չեն անհանգստացնի, պատասխանեց որդին. — Ձոնը գնաց Ամերիկա, իսկ Հարրին վախճանվեց:

— Վախճանվեց, բացականչեց հայրը, ցնցումով որը չը կարողացաւ մինչև անգամ խեղտել իւր մէջ:

— Վախճանվեց, կրկնեց երիտասարդը, և վախճանվեց իմ կռների վրայ, որին, ինչպէս մի շան, սպանեց անտառապետը: Նա օրօրվեց, ես բռնեցի նրան և արիւնը վազում էր ձեռքերիս վրայով: Արիւնը ջրի պէս բղտում էր նրա կողքից: Եղբայրս ուժաթափվեց և իրան շատ վատ էր զգում, բայց և այնպէս նա ծունկ

չօքեց կանաչ խոտի վրայ և աղօթում էր Աստծուն: Եթէ նրա մայրը երկնքումն է, իւր կրասեր որդու մեղաց թողութեան համար արած աղօթքները լսելի կը լինին: «Ես մօրս սիրելին էի, Վիլլ — ասաց նա, — և ուրախութեամբ յիշում եմ այժմ այն ժամանակը, երբ նա մեռնում էր. ես թէպէտև այն ժամանակը դեռ երեխայ էի, նրա մահճակալի մօտ ծունկ չօքեցի և գոհացայ Արարչից) որ նա իմ սիրաբ լցրել էր դէպի մայրս, այնքան սիրով, որ ես ոչ մի ժամանակ, իմ ոչ մի արարմունքով նրան արտասովելու առիթ չեմ տուել... Ախ, Վիլլ, ե՞նչու նրան էր վիճակուած մեռնել, իսկ հօրս կենդանի մնալ:» Այս նրա վերջին խօսքերն էին, հայր, — հասկացիր, ինչպէս ուզում ես: Հարբած ժամանակդ դու զարկեցիր նրա երեսին, որից յետոյ, յիշում ե՞ս, մենք փախանք, և ահա թէ ինչով վերջացաւ այդ:

— Աղջկը դառնազին ողբում էր, իսկ հայրը ձեռքերով երեսը ծածկած, այս և այն կողմն էր տատանվում:

Եթէ ինձ ձերբակալ են, — շարունակեց երիտասարդը — կախաղանից ինձ փրկութիւն չկայ, որովհետև անտառապետին սպանեցի ես: Այս տեղ նրանք ինձ չեն գտնի, եթէ դու ինձ չը յանձնես, հայր, և այստեղ, քեզ մօտ կը թաք կենամ ես, մինչև որ ինձ կը յաջողուի բոլորվին փախչել այստեղից:

— Ամբողջ երկու օր երեքն էլ տանը մնացին և չը գուրս եկան սենեակից: Բայց երրորդ երեկոյին աղջկայ դրութիւնը առաջուանից աւելի վատացաւ, և կերակուրի վերջին մնացորդը արդէն վերջացել էր: Այժմ շատ անհրաժեշտ էր, որ նրանցից մէկնուձեկը

դուրս գնար որսի. և որովհետև աղջիկը սաստիկ թոյլ էր, այդ պատճառով երեկոյեան պահուն դուրս գնաց հայրը:

— Նա աղջկայ համար միքանի տեսակ դեղ և մի աննշան փող (սնդրեց) որով սակայն կարելի էր երկու երեք օր ևս իրենց գոյութիւնը երկարել: Այս բաները վերցրած նա ուղևորվեց դէպի տուն: Նա պէտք է անց կենար զինետան մօտով. մի վայրկեանաչափ նա կանգ առաւ, զինետան մօտով անցաւ, նորէն յետ դարձաւ, կրկին կանգ առաւ և, վերջապէս, ներս մտաւ: Նա չը նկատեց երկու անծանօթ մարդկանց, որոնք մուտքի մօտ կանգնած հետևում էին այցելուներին: Նրանք հէնց այդ ըրպէին կամենում էին դադարեցնել իրենց անօգուտ դիտողութիւնը, երբ նրա կանգ առնելը և յետ դառնալը իւր վրայ դարձրեց նրանց ուշադրութիւնը: Երբ նա մտաւ զինետուն, սրանք հետևեցին նրան:

— Յուրտ է... Արի միմի գցենք ինձ հետ, բարեկամ, —ասաց նրանցից մէկը և զինու բաժակը մեկնեց նրան:

— Մի բաժակ էլ ինձ հետ, —ասաց միւսը և իսկոյն լցրեց բաժակը, հէնց որ դատարկվել էր:

Թշուառականը մտաբերեց իւր քաղցած որդոցը և այն վտանգը, որի միջ գտանվում էր նրա որդին: Բայց նրանք ինչացու էին արբեցողի համար... Նա խըմում էր և շուտով ուշքը կորցրեց:

Միգապատ, մութ գիշեր է, պարոն վարդէն, շնջաց նրա ականջին այս անծանօթներից մէկը, երբ նա վերջապէս ուզում էր դուրս գնալ փողի կէսը խմած, որից գուցէ և կախուած էր նրա դատեր կեանքը:

— Հէնց այնպիսի երեկոյ, որ շատ կարևոր է թագնը-

ված մարդկանց համար, պարոն վարդէն, շնջաց միւսը:

— Ախր դէ, —ասաց նա, որը առաջին անգամ սկսեց խօսել և տարաւ նրան դէպի անկիւնը: Մենք երիտասարդ պատանու ամենայն ինչը դիտեցինք, ուզում էինք նրան ասել, որ այժմ ամենալաւ ժամանակն է և ամեն ինչ պատրաստ, բայց չը կարողացանք նրան զրանել, որովհետև նա ինքը չը կարողացաւ մեզ ասել թէ որտեղ է մտադիր թաքնվել Լօնդօն հասնելուց յետոյ... Ախր չէ որ նա այստեղ է:

Հայրը ուրացաւ:

— Մի նաև կայ, որ կէս գիշերին պէտք է դուրս գնայ, երբ ջուրը կը բարձրանայ, — և մենք նրան նաւը կը հասցնենք: Մենք նրա փախուստը սարգեցինք ուրիշ անունով և յոր ամենագլխաւորն է նրա համար վաճարեցինք: Նրա բախտիցն է ահա յոր մենք քեզ այստեղ պատահեցանք:

Նրանք ստիպեցին նրան, որ մի բաժակ էլ խմէ՝ դարձեալ մէկը, և հինգ ըրպէից յետոյ հայրը, ինքն էլ այդ չեմանալով իւր որդուն մատնեց դահիճների ձեռքը...

Ծանր և տխուր էին անցնում ժամերը եղբօր համար հիւանդ քրոջ հետ, նրանց տխուր ապաստարանում, և անհանգիստ լարուած ուշադրութեամբ ականջ էին դնում նրանք ամեն մի ջնջին ձայնին: Վերջապէս սանդուխների վրայ լսվեցան ծանր քայլերի ոտնաձայներ և շուտով զրանից յետոյ ներս գլորվեց հայրը:

Աղջիկը նկատեց, որ նա հարբած էր, և մոմը ձեռքին գնաց հօրը դիմաւորելու, բայց յանկարծ կանգ առաւ, բարձրաձայն ծուլաց և վայր ընկաւ յատակի վրայ անզգայ, — նա տեսել էր յատակի վրայ մի ուրիշ մար-

դու ստուգեիր: Երկու անձանօթները ներս թափվեցան,
և նոյն վայրկենին երիտասարդը արդէն կալանաւորված
էր և ձեռքերը շղթայված:

— Ծերունու շնորհիւ ամեն ինչ լաւ և առանց
աղմուկի կատարվեց, ասաց խուզարկուհիներից մէկը միւսին:
— Բարձրացրու աղջկան, Թափմաս: Վերկաց, վերկաց,
աղջիկս, լաց լինելով փորձանքին չես օգնի: Այժմ ա-
մեն բան վերջացաւ և նրան էլ յետ չես դարձնի:

Երիտասարդը մի րոպէ թեքվեց աղջկայ վրայ և
յետոյ սպառնալից դէմքով դէպի հայրը դարձաւ, որը
պատի տակը գլորվեց և հարբած անմտութեամբ նայում
էր շրջապատողներին:

— Ինձ ականջ արան հայր, — ասաց նա այնպիսի
ձայնով, որ արեւոյնը զողը բռնեց: — Իմ եղբօր և իմ
արիւնը ընկնում է քո շլինքը: Ես ոչ մի ժամանակ չը
տեսայ քեզանից հայրական հայեացք, չը լսեցի մի քըն-
քոյշ խօսք, դու ամենևին ինձ վրայ չը հոգացիր, և
կենդանի լինիս թէ մեռած՝ ես այդ քեզ երբէք չեմ
ների: Մեռիր, երբ և ինչպէս կամենաս, բայց ես կը հե-
տեւեմ քեզ, որպէս քո չար ոգին: Ես խօսում եմ այժմ
գերեզմանից և այժմեանից յայտնում եմ քեզ, հայր,
որ վաղ թէ ուշ, երբ դու կը կանգնես քո Արարչի ա-
ռաջէ, — քո որդիքը ձեռք ձեռքի տուած՝ նոյնպէս կը
կանգնեն նրա գահոյից առաջ և կը խնդրեն նրա ահա-
ւոր դատաստանը քո մասին:

Նա սպառնանքով բարձրացրեց իւր շղթայուած
ձեռքերը, մի նախատական հայեացք ձգեց հօր վրայ և
դանդաղ քայլերով դուրս գնաց սենեակից: Եւ այնու-
հետեւ նրան այլևս չը տեսան այս աշխարհում ոչ հայ-
րը և ոչ քոյրը:

529

Երբ ձմեռուայ առաւօտեան աղօտ և միզապատ
լոյսը թափանցեց նեղլիկ փողոցը և ներս նայեց աղքա-
տիկ սենեակի կեղտոտուած լուսամուտներից՝ արեւոյդը
զարթեց ծանր քնից և իւր չորս կողմը աչք ածեց:
Հին դօշակը յատակի վրայ ընկած էր առանց ճխլովե-
լու, ամեն ինչ նոյն դրութեան մէջ էր, ինչպէս որ նա
թողել էր երեկ, և ոչ մի նշանից չէր երևում, որ իրա-
նից գատ մի ուրիշը գիշերած լինէր սենեակում: Ծերու-
նին միւս կենողներից և հարեաններից հարցրեց իւր
աղջկայ մասին, բայց նրան ոչ ոք չէր տեսել և ոչ էլ
մի բան էին լսել նրա մասին: Նա ընկաւ փողոցները և
վրդովուած վազում էր, ուշադրութեամբ նայելով փո-
ղոցի ամբօխի մէջ գտնուած ամեն մի գունաթափուած
և հիւանդոտ դէմքի վրայ, բայց բոլորը ի զուր. . . Զար-
դված և մենակ, գիշերուադէմ, նա վերադարձաւ իւր
սառած բնակարանը:

Նա իւր հարց ու փորձը դարձեալ միքանի օր
շարունակեց, բայց իւր աղջկայ հետքը չը դտաւ և ոչ
մի կենդանի խօսք նրա մասին իւր ականջը չը հասաւ:
Վերջապէս, յուսահատուած, նա թողեց իւր հարց ու
փորձը: Նա վաղուց մտածում էր, որ աղջիկը իրան կը
թողնէ, կը հեռանայ որ և է կողմի վրայ և իրան հա-
մար լռիկ քնիկ իւր սնունդը կը հայթայթէ: Եւ ահա,
արդարեւ, նա ձգեց իրեն մենմենակ քաղցածութիւնից
սատկելու: Նա կրճտացրեց ատամները և նըղվեց աղջկան:

Թշուառականը դռներում մուրացկանութիւն էր
անում, և, հին սովորութեամբ, գինու էր տալիս վերջին
կոպէկը, որը յաջողվում էր նրան պոկել այս և այն
կարեկից և թեթեւամիտ մարդուց: Մի տարին անցաւ
նրա գլխով և միայն բանտի տանիքը նրան



րան տուաւ վերջին միքանի ամիսների ընթացքում: Նա քնում էր դռների առջև և աղիւսի պահեստներում, — ամեն տեղ ուր որ մի փոքր պաշտպանութիւն էր գտնուում անձրեւից կամ ձիւնից, — և արբեցող մնաց անօթեւան աղքատութեան յետին աստիճանի վրայ, սարսափելի զրկանքների, և ամենախղճալի մարմնական ցաւազարութեանց մէջ: Վերջապէս, մի անտանելի ցուրտ գիշեր, ուժաթափվելով, մի մեծ տան մուտքի առաջև անզգայ վայր ընկաւ: Վերջին ժամանակները նա բոլորովին հալ ու մաշ եղաւ, — մնացին կաշին ու ոսկորները, և ձիւնաղի էր նմանում: Քշերը ներս էին ընկել և կապտել աչքերը փոս էին ընկել և հանգել, ոտները դողում էին և սառնամանիքը թափանցում էր նրա մարմնի մէջ, զլիւից սկսած մինչև մատների ծայրերը:

Եւ ահա՛ վաղուց ի վեր մոռացուած խայտառակութեամբ կործանուած կեանքի տեսարանները պայծառ զոյներով նկարվեցան նրա երեւակայութեան առջև: Նա յիշեց այն ժամանակը, երբ զուարճանում էր ընտանեկան կեանքով, յիշեց սիրելիներին, որոնք այն ժամանակ սփոփում էին իւր օրերը, և նրան թւում էր, իբր թէ իւր որդոց կերպարանքները վեր են կացել գերեզմաններից և կանգնել են իրեն առջև — պարզ ճշգրիտ, ասես թէ կենդանի. նա կարողանում էր նրանց շօշափել ներկայութիւնը զգալ: Այն հայեացքները, որ վաղուց մոռացվել էին, դարձեալ նրա վրայ էին սևեռած. վաղուց չը լսուած ձայները եկեղեցու զանգակի ձայնի նման հնչում էին նրա ականջներում: Բայց այս մի վայրկեան միայն շարունակվեց: Անձրեւը հեղեղե նման թափվում էր նրա վրայ և քաղցածութիւնն ու ցուրտը մաշում էին նրան նոր ոյժերով:

Նա զոռով տեղեց բարձրացաւ և դողդոջիւն ոտքերով միքանի քայլ արեց դէպի առաջ: Փողոցը ամայի էր և լուռ, — այն տարածամին միքանի անցորդներ շտապում էին արագ քայլերով — և նրա խուսրոս ձայնը անյայտանում էր մրկի մունչիւնի մէջ: Նրկին ձեռք առաւ նրան արդէն փորձած սարսափելի ցուրտը և արիւնը սառեց երակների մէջ:

Բայց քունը մօտ չէր գալիս նրա անշարժ, մեռած աչքերին: Նա կատարեալ գիտակցութեան մէջ և աչքերը բաց, սկսեց տարօրինակ կերպով զառանցել: Լաւ ծանօթ հարբած քէֆի աղմուկը հնչում էր նրա ականջներում, բաժակը նրա բերանի մօտն էր, զազգահը ծածկուած էր ընտրեալ նախաձաշիկներով, — այս ամէնը նրա աչքի առաջին էին. նա պարզ ատնում է այդ բոլորը, նրան հարկաւոր է միայն որ ձեռքը մեկնէ և վերցնէ, — և այս ճշգրտանման պատկերների հետ միասին՝ նա միւլենոյն ժամանակ զգում էր, որ մենմենակ է, ամենքից արտաքսուած, ընկած է ամայի փողոցում: Նա լսում էր ինչպէս անձրեւի ծանր կաթիլները զարկվում էին քարերին, ինչպէս մահը գողունի ամեն տեղ քայլ առ քայլ հետեւում էր իրեն, և մի ադամորդի չը կայ, որ խնամք տանէր կամ օգնէր իրեն:

Յանկարծ ծերունին վեր թռաւ տեղեց սարսափած: Նա լսեց իւր սեպհական ձայնը, որ տարածվում էր գիշերային լուութեան մէջ. նա չէր հասկանում ինչ բան է և որտեղեց: Վա՛, հառաչանք... Կարձեանք... Նա գիտակցութիւնը կորցնում էր, անկապ և կցկտուր բառեր էին թափվում նրա բերանից, և նրա ձեռքերը յնցմամբ զօրանում էին, որ տանջեն և զջլտեն ոսկորներից սեպհա.

կան մարմինը: Թշուառականը քիչ էր մնում որ խելքը կորցնի և օգնութիւն էր գոռում մինչև որ ձայնը կարվեց:

Նա գլուխը բարձրացրեց և նայում էր դէպի երկայն, ամայի փողոցը: Նա յիշեց, որ շատերը այնպէս, ինչպէս որ ինքն է, մերժուածներ, որոնք դատապարտված են գիշեր և ցերեկ թափառելու այս փողոցներում, շատ անգամ խելքները կորցնում էին մենակութիւնից. յիշեց նմանապէս, որ շատ տարիներ առաջ լուսել էր, թէ ինչպէս գտել էին անտուն անտեղ մէկ թշուառականի, որը նստած յարդանոցի հեռուոր անկիւնում սրում էր ժանգոտած դանակը, որը և խրեց նա իւր սիրտը, մահը նախադասելով դռնէ դուռ տաժանելի չարքաշ կեանքից: Ծերունին մի ակնթարթում ընդունեց անդառնալի վճիռը, և նրա ոտքերը նոր ոյժ ստացան. նա արագութեամբ վազեց իւր տեղից և վազում էր առանց շունչ քաշելու, մինչև որ հասաւ գետի ափը:

Անտերլուսեան կամուրջը տանող քարեայ սանդղղներով կամաց կամաց ցած իջաւ և նստեց ջրի ափին, և երբ գիշերապահը անցնում էր՝ նա շնչառութիւնը պահում էր: Այլանաւորի սիրտը երբէք այնպէս անհամբերութեամբ չէր բաբախի իւր կեանքը և ազատութիւնը փրկելու յոյսով, ինչպէս որ բաբախում էր այս թշուառականի սիրտը մահուան առաջ: Նրան չը նշմարեցին, և հէնց որ նրան անհանգստացնող քայլերի ոտնաձայները այլ ևս չէին լսվում հեռուից՝ նա զգուշութեամբ դուրս եկաւ և կանգնեց մնայլ կամարների աակ, որ մի տեսակ ապաստարան էր:

Մակնթանցութիւն էր և ջուրը ծփալով թրջում էր նրա ոտքերը: Անձրեւը դադարեց, քամին հանդար-

տվեց, և ամեն ինչ այդ բոպէին խաղաղ էր — այնպէս խաղաղ, որ նա հանդիպակաժ ափի ամենաանշան ձայնն անգամ պարզ որոշում էր: Գետը յամրաշարժ և նիրհած թաւալում էր իւր ալիքները: Օտարօտի, երևակայական պատկերներ էին դուրս գալիս այս ալիքներից և զլխով էին անում նրան. բարկութեամբ փայլատակող աչքերը նրան էին նայում ջրի միջից և կարծես ծիծաղում էին նրա անվճռականութեան վրայ, այնինչ քամակի խուլ շնչիւնը նրան դէպի յառաջ էր գրգռում: Նա միքանի քայլ ետ ետ գնաց, մի փոքրիկ ցայտում գործեց և յուսահատութեամբ ջուրը նետվեց:

Միքանի վայրկեանից յետոյ նա նորից ջրի երեսն եղաւ... Բայց որպիսի փոփոխութիւն կատարվեց այդ կարճ միջոցում նրա ամբողջ մտքերի և զգացմունքների մէջ: Աե՜նք, կե՜նք, ինչ տեսակ հանգամանքներումն էլ լինի — աղքատութեան, թշուառութեան, քաղցածութեան մէջ — այդ միևնոյն է, միայն թէ մահը չը լինի: Նա յամառութեամբ կռվում էր իւր զլխին թափվող ալիքների հետ և մահուան վերջին թերն ընկած՝ կատաղութեամբ գոռում էր: Որդու անէծքը հնչում էր նրա ականջներում: Գետեզը, գետեզը... Օ, թէ կուզ մի բուռն հաստատուն հող... Նա քիչ մնաց հասնում էր սանտուղի առաջին աստիճանին: Եթէ մի թղաչափ էլ մօտենար և նա անգատուած կը լինէր. բայց ջրի հոսանքը նրան հեռացրեց, տարաւ կամրջի մնայլ կամարների տակ և նա խորասուզվեց: Նա մի անգամ էլ ջրի երեսը լողաց և նորից սկսեց կատաղի կռիւը կեանքի համար: Եւ մէկ վայրկեան — մի ամենակարճ վայրկեան — պարզ կերպով փայլեցին նրա առաջև գետեզրի շինութիւնները, կամրջի վրայի ճրագները, որի կամարների տա-


կից զուրս բերեց նրան գետը մթին ալիքները, պայծառ աստղերը, և արագութեամբ սահող ամպերը... Նա կրկին ընկղմուեց, կրկին ջրի երեսն եղաւ: Պայծառ փայլակը կրակին էր աալիս երկրից դէպի երկինքը և դողում էր նրա աչքերի առաջը, և ջուրը որտաձայն խշում էր նրա ախանջներում, խլացնելով նրան իւր կատաղի մռնչիւնով...

Մի շաբաթից յետոյ միքանի վերստ հեռաւորութեան վրայ ջրի հոսանքը ավր նետեց մի դիակ — ուռած, վերուած անձև մի մտազուհի: Ոչ ոք չը ճանաչեց նրան և ոչ ոք չը լաց եղաւ վրան. արբեցողի դիակը գերեզման իջեցրին, որտեղ վաղուց արդէն փաած է այժմ:



վերջ:





728

'20 13

